



ՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հասարակական շենք-շինությունների կառուցման,
նորոգման/հիմնանորոգման և վերակառուցման տեխնիկական
բնութագրի/առաջադրանքի կազմման



Երևան 2019

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որակյալ նախագիծ և շինարարական աշխատանքներ ապահովելու համար անհրաժեշտ է նախագծողին տրամադրել անհրաժեշտ տվյալներ, որոնք մանրամասն պետք է նկարագրեն կատարվող աշխատանքները և ակնկալվող արդյունքը:

1. Կիրարկման ոլորտ

Սույն ուղեցույցը կիրառելի է մանկապարտեզների, համայնքային կենտրոնների, մշակույթի տների և այլ հասարակական շենքերի նորոգման/վերակառուցման և կառուցման նախագծերի պատվիրման առաջադրանքի (այսուհետև՝ տեխնիկական բնութագիր) կազմման համար: Այն նպատակ ունի «համայնքներին տրամադրել մեթոդական ցուցումներ՝ ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման ծրագրի շրջանակներում հանրային շենքերի նորոգման, վերակառուցման և կառուցման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների տեխնիկական բնութագրերի կազմման վերաբերյալ:

2. Համառոտ նկարագիր

Հասարակական շենք-շինությունների կառուցման, նորոգման/հիմնանորոգման կամ վերակառուցման համար անհրաժեշտ է ներկայացնել՝ կառուցվող, նորոգվող/հիմնանորոգվող կամ վերակառուցվող օբյեկտի վերաբերյալ հստակ տեղեկատվություն:

Մասնավորապես տեխնիկական բնութագրում պետք է նշված լինի՝

1) վերանորոգման, հիմնանորոգման և վերակառուցման դեպքում՝

- օբյեկտի հասցեն, կառուցման տարեթիվը,
- նպատակային նշանակությանն առնչվող տեղեկատվությունը /օրինակ մանկապարտեզի դեպքում՝ սաների և աշխատակազմի թիվը և այլ առանձնահատկություններ/,
- օժանդակ կառույցների առկայությունը,
- գոյություն ունեցող մասնաշենքերի հատակագծային չափերը և

ընդհանուր մակերեսները,

- հարկայնությունը, կոնստրուկտիվ հիմնական լուծումները,
- ներքին ինժեներական ցանցերի առկայությունը և փաստացի վիճակը,
- համառոտ տեղեկատվություն նախկինում կատարված հիմնանորոգման ծրագրերի և տեխնիկական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ:

2) Նոր կառուցվող օբյեկտի դեպքում՝

- նախատեսվող օբյեկտի հասցեն,
- տրամադրվող հողատարածքի չափերը,
- օբյեկտի նպատակային նշանակության վերաբերյալ սպառիչ նկարագրությունը,
- նախատեսվող օբյեկտի շենք-շինության ընդհանուր մակերեսը,
- ինժեներական ցանցերի առկայությունը, կամ դրանց հեռավորությունը նախատեսվող օբյեկտից,
- շենք-շինության նպատակային օգտագործման մակերեսների/տարածքների և առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվությունը,
- օժանդակ կառույցների անհրաժեշտությունը,
- հարկայնության, կոնստրուկտիվ հիմնական լուծումների վերաբերյալ տեղեկատվությունը:

3. Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը

- նկարագրել օպտիմալ շահագործման համար ծավալահատակագծային լուծումները և կոնստրուկտիվ համակարգի կառուցման կամ վերակառուցման տեխնիկական միջոցառումները (հիմքեր, պատեր, ծածկեր, բացվածքներ, տանիք),
- ճարտարապետահատակագծային լուծումներին ներկայացվող լրացուցիչ պահանջները,
- ներքին սառը և տաք ջրամատակարարման, ջեռուցման, էլ. մատակարարման, գազամատակարարման, օդափոխության, հակահրդեհային ազդանշանման, տեսահսկման, կապի, ջրահեռացման նոր համակարգերի կառուցումը/վերանորոգումը և լրացուցիչ պահանջները,

- օբյեկտի /մասնաշենքերի, տարածքների/ արդիական ներքին հարդարումը,
- ինտերյերի մշակման վերաբերյալ պայմանները,
- -Էներգաինսայողության միջոցառումների նկարագրությունը,
- -հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժման համար անհրաժեշտ միջոցառումները և նախագծային լուծումների նախատեսումը (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, վերհան սարքեր կամ վերելակ և այլն),
- տարածքի բարեկարգումը, փոքր ճարտարապետական ձևերը, կանաչապատումը և լուսավորությունը, ըստ անհրաժեշտության արտաքին հաղորդակցուղիների կառուցում-վերակառուցումը:
- օգտագործվող շինարարական նյութերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Աշխատանքների կատարման ժամկետը՝ սկիզբը և ավարտը:

4. Նորմատիվային վկայակոչումներ (տեղեկատվական)

1) Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝

- ճարտարապետահատակագծային առաջադրանք և տեխնիկական պայմաններ,
- ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն,
- տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացություն,
- Նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ),
 - հանույթ,
 - չափագրություններ,
 - ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (բնապահպանություն, մշակույթ):

2) Նորմատիվային պահանջներ

- ՀՀ կառավարության 19.03.2015թ. «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշում,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի ՀՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N263-Ն հրաման,

- ՀՀ ԿԱ ԸՊԿ Նախագահի 05.04.2018թ <Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին> թիվ 43-Ա հրաման,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ ՀՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր> թիվ 24-Ն հրաման,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի <ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) <Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար> շինարարական նորմերի հաստատման մասին> N253-Ն հրաման,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունիսի 16-ի <Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին> N 41-Ն հրաման,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 2-ի <Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման (ծրագրային և ճարտարապետաշինարարական) արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին> N 19-Ն հրաման,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի <ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին> N09-Ն հրաման,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի <Հանրակրթական նշանակության շենքեր> N 103-Ն հրաման,
- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի <Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թվականի նոյեմբերի 29-ի N273 -Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> N128-Ն հրաման,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016 թվականի հունիսի 16-ի <ՀՀՇՆ 24-01-2016 <Ջերմային պաշտպանություն> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում լրացում կատարելու մասին> N 120-Ն հրաման,
- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի ապրիլի 13-ի <ՀՀՇՆ 22-03-2017 <Արհեստական և բնական լուսավորում> շինարարական նորմերը հաստատելու, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին> N 56-Ն հրաման,
- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 526-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին> N 392-Ն որոշում,
- ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի <Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ> N2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2002թվականի փետրվարի 11-ի N82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 12-Ն հրաման,
- ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի <Նախադպրոցական կազմակերպությունների/հիմնարկների/ N2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին> N 857 հրաման,
- ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին> N 1504-Ն որոշում,

- ՀՕ-110-Ն 2014թվականի հունիսի 21-ի <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք,

- <Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին> ՀՀ օրենք,

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի <Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին> N 438 որոշում:

- *Ծանոթություն*

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (ՀՀ քաղաքաշինության նախարարության) նորմատիվ փաստաթղթերի ամբողջական ցանկը և փաստաթղթերը տեղադրված են պաշտոնական minurban.am կայք-էջի <Օրենսդրություն> բաժնի <Նորմատիվատեխնիկական փաստաթղթեր> մասում: